

Կիրակի, Յունուար 3, 2010

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ**

Գլուխ 22:24-30

Աշակերտներուն մէջ վէճ ծագեցաւ թէ իրենցմէ ո՞վ պիտի նկատուի մեծը: Յիսուս անոնց ըսաւ. »Ազգերու թագաւորներ կը տիրեն իրենց ժողովուրդներուն վրայ եւ իշխողները բարերար կը կոչուին իրենց հպատակներուն կողմէ: Բայց ձեր պարագային այդպէս պէտք չէ ըլլայ: Ընդհակառակը, ձեր մէջէն ամենէն մեծը թող ամենէն պոտիկին պէս ըլլայ, եւ առաջնորդը՝ սպասաւորին պէս: Ո՞վ է մեծը. սեղան նստողը թէ սպասաւորը: Անշուշտ սեղան նստողը: Բայց ես ձեր մէջ սպասաւորի պէս եմ: Դուք միշտ բովս մնացիք փորձութիւններու ընթացքին. եւ ես ահա կը խոստանամ թագաւորութիւն տալ ձեզի, ինչպէս Հայրս ինծի տալ խոստացաւ: Իմ սեղանէս պիտի ուտէք եւ խմէք իմ թագաւորութեան մէջ, եւ պիտի բազմիք գահերու վրայ՝ դատելու համար Իսրայէլի տասներկու ցեղերը«:

Զորեմբաթի, Յունուար 6, 2010

ՄԵՆՈՒՆԴ ԵՒ ԱՍՏՈՒԱՄԱՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ**

Գլուխ 1:18-25

Այսպէս պատահեցաւ Յիսուս Քրիստոսի ծնունդը:

Իր մայրը՝ Մարիամ, նշանուած էր Յովսէփի հետ, սակայն նախ քան ամուսնութիւնը Մարիամ յղի մնաց Սուրբ Հոգիէն:

Յովսէփ, իր նշանածը, արդար մարդ ըլլալուն՝ չուզեց հանրութեան առջեւ խայտառակել զինք, այլ խորհեցաւ լռելիայն ետ ընել իրենց նշանախօսութիւնը: Մինչ այս մասին կը մտածէր, ահա Տիրոջ հրեշտակը երեւցաւ իրեն երազի մէջ եւ ըսաւ. »Յովսէփ, Դաւիթի՝ որդի, մի՛ վախնար ամուսնանալու նշանածիդ՝ Մարիամի հետ, որովհետեւ ան որ իրմէ պիտի ծնի Սուրբ Հոգիէն է: Անհկա գաւակ մը պիտի ծնի եւ գայն պիտի կոչես Յիսուս, որովհետեւ ան իր ժողովուրդը իրենց մեղքերէն պիտի փրկէ«: Այս բոլորը պատահեցան, որպէսզի կատարուի Տիրոջ կողմէ ըսուածը եսայի մարգարէին միջոցաւ.

*»Ահաւասիկ կոչսը պիտի յղանայ եւ որդի մը ծնի:
Անհկա էմանուէլ պիտի կոչուի,
որ կը նշանակէ՝ Աստուած մեզի հետ«:*

Երբ Յովսէփ արթնցաւ, կատարեց ինչ որ Տիրոջ հրեշտակը հրամայած էր իրեն եւ ամուսնացաւ իր նշանածին՝ Մարիամի հետ. բայց չյարաբերեցաւ անոր հետ, մինչեւ որ իր անդրանիկ գաւակը ծնաւ, եւ գայն Յիսուս կոչեց:

Կիրակի, Յունուար 10, 2010 (Հինգերորդ Օր Ս. Մենդեան)

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ
Գլուխ 1:39-56

Նոյն օրերուն Մարիամ ցամբայ ելլելով անապարանով գնաց Յուդայի լեռնային շրջանի ֆաղաֆներէն մէկը: Հոն Զաֆարիայի տունը մտնելով Եղիսաբէթի ողջոյն տուաւ: Երբ Եղիսաբէթ Մարիամի ողջոյնը լսեց, իր որովայնին մէջ երեխան շարժեցաւ եւ Եղիսաբէթ Սուրբ Հոգիով ներշնչուած՝ բարձրաձայն ըսաւ. «Կիներուն մէջ օրհնեա՛լ ես դուն եւ օրհնեալ է գաւակը որ կը կրես որովայնիդ մէջ: Ինչ երջանկութիւն, որ Տիրոջս մայրը ինձի կ'այցելէ, որովհետեւ երբ ողջոյնդ լսեցի, երեխասս ուրախութեամբ շարժեցաւ որովայնիս մէջ: Երանի քեզի որ հաւատացիր, որովհետեւ Աստուծոյ կողմէ քեզի ըսուածները պիտի կատարուին:»

Մարիամ ըսաւ.

»Ինչպէս Տէրը գովաբանեմ.

Ահա հոգիս կ'ուրախանայ Աստուծով, իմ փրկիչովըս,
որովհետեւ ան տեսաւ իմ աղախինին հեգութիւնը:

Եւ ասկէ ետք բոլոր ազգերն երանի պիտի տան ինձի,
քանի Հոգին Աստուած ինձի համար

մեծամեծ գործեր կատարեց.

Սուրբ է անունը անոր:

Բոլոր ժամանակներուն մէջ

ողորմութեամբ ան կը նայի

աստուածավախ մարդոց վրայ:

Իր գորաւոր բազուկով

ոչնչացուց հպարտները՝

իրենց բոլոր խորհուրդներով:

Գահազրկեց հզօրները

եւ բարձրացուց խոնարհները:

Անօթիները բարիքներով լիացուց,

մինչ հարուստները դատարկաձեռն արձակեց:

Պաշտպան եղաւ իր ծառային՝ Իսրայէլի,

որովհետեւ յաւերժական ողորմութիւն

խոստացած էր մեր հայրերուն՝

Աբրահամի եւ անոր գաւակներուն:»

Մարիամ շուրջ երեք ամիս Եղիսաբէթի մօտ մնալէ ետք վերադարձաւ իր տունը:

Կիրակի, Յունուար 17, 2010

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ

Գլուխ 2:1-11

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ.--

Յիսուսի Գալիլիա հասնելուն երրորդ օրը հարսանիք մը կար Կանա ֆաղափի մէջ, եւ Յիսուսի մայրը հոն էր: Յիսուս եւ իր աշակերտներն ալ հրաւիրուած էին հարսանիքին:

Երբ գինին պակսեցաւ, Յիսուսի մայրը իրեն ըսաւ. «Գինի չունինք»: »Մայր, ինձի այս մասին ըսելու պէտք չունիս«, պատասխանեց Յիսուս, »իմ ժամանակս տակաւին չէ հասած»: Սակայն իր մայրը ըսաւ սպասաւորներուն. »Ինչ որ ըսէ ձեզի, կատարեցէ՛ք«:

Հրեաներու մաքրուելու սովորութեան համաձայն հոն քարէ վեց կարասներ կային, որոնցմէ իւրաքանչիւրը ութսունէն հարիւր լիդր կ'առնէր, Յիսուս ըսաւ սպասաւորներուն. «Կարասները ջուրով լեցուցէ՛ք»: Եւ սպասաւորները լեցուցին մինչեւ բերան: Յետոյ ըսաւ անոնց. «Հիմա առէ՛ք եւ մատակարարին տարէ՛ք»: Անոնք ալ տարին:

Մատակարարը համտեսեց գինիի փոխուած ջուրը, բայց չգիտցաւ թէ ուրկէ էր. թէեւ սպասաւորները, որոնք ջուրը լեցուցած էին, գիտէին: Այն ատեն մատակարարը փեսային ըսաւ. «Ամէն մարդ նախ ընտիր գինին կը հրամցնէ, իսկ երբ գինովման, այն ատեն հասարակը, մինչ դուն ընտիր գինին պահեր ես մինչեւ հիմա»:

Յիսուս իր այս առաջին հրաշքը կատարեց Գալիլիայի Կանա քաղաքի մէջ: Հոն ան իր փառքը յայտնեց, եւ աշակերտները հաւատացին իրեն:

Կիրակի, Յունուար 24, 2010

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐՄԱՆԷՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ

Գլուխ 6:15-21

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ.--

Յիսուս երբ գիտցաւ թէ պիտի գան բոնութեամբ զինք թագաւոր ընելու, դարձեալ լեռը ելաւ, առանձինն:

Երեկոյեան, Յիսուսի աշակերտները ծովեզերք իջան եւ նաւակ մտնելով սկսան երթալ ծովուն դիմացի կողմը, դէպի Կափառնայում: Երբ մթնցաւ, տակաւին Յիսուս իրենց եկած չէր: Ծովը գորաւոր հովէն կ'ալեկոծէր:

Աշակերտները հագիւ հինգ կամ վեց ֆիլովեր նաւարկած էին, երբ տեսան Յիսուսը որ ծովուն վրայէն փալելով կը մօտենար նաւակին: Բոլորը սարսափեցան: Յիսուս ըսաւ անոնց. «Ես եմ, մի՛ վախնա՛ք»: Անոնք կ'ուզէին զինք նաւակին մէջ առնել, բայց արդէն նաւակը հասաւ այն տեղը, ուր կ'երթային:

Կիրակի, Յունուար 31, 2010

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐՄԱՆԷՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

Գլուխ 6:22-38

Երբ զինք գտան ծովուն միւս կողմը, հարցուցին. «Վարդապետ, ե՞րբ եկար հոս»: Յիսուս անոնց պատասխանեց. «Կ'ըսեմ ձեզի, վստահաբար դուք զիս կը փնտտէք ո՛չ թէ որովհետեւ հրաշքներ տեսա՛ք, այլ որովհետեւ այդ հացէն կերա՛ք եւ կշտացա՛ք: Փոխանակ կորստական ուտելիքը փնտտելու, ջանացէ՛ք ապահովել այն կերակուրը որ մարդու Որդին պիտի տայ ձեզի, որովհետեւ Հայրն Աստուած իր հաւանութեան կնիքը դրաւ անոր վրայ»:

Անոնք հարցուցին. «Ի՞նչ ընենք, որ Աստուծոյ ուզածը կատարած ըլլանք»: Յիսուս անոնց պատասխանեց. «Աստուծոյ ուզածը այն է, որ հաւատա՛ք անոր որ ինք զրկեց»:

Անոնք ըսին. «Ի՞նչ հրաշք պիտի գործես, որպէսզի տեսնենք եւ քեզի հաւատանք. ի՞նչ պիտի ընես: Մեր հայրերը մանանան կերան անապատին մէջ, ինչպէս գրուած է, 'Անոնց երկինքէն հաց տուաւ

ուտելու համար՝»: Յիսուս անոնց ըսաւ. «Ճշմարտութիւնը կ'ըսեմ ձեզի, թէ ինչ որ Մովսէս ձեզի տուաւ՝ երկինքէն իջած հացը չէր, այլ հիմա է որ Հայրս ձեզի կու տայ երկինքէն իջած նշմարիտ հացը: Որովհետեւ Աստուծոյ տուած հացը ան է, որ երկինքէն կ'իջնէ եւ կեանք կու տայ աշխարհին»: Անոնք ըսին. «Տէ՛ր, մի՛շտ տուր մեզի այդ հացը»: Յիսուս ըսաւ անոնց. «Ես եմ կեանքի հացը. ան որ ինձի կու գայ, բնաւ պիտի չանօթեանայ եւ ան որ ինձի կը հաւատայ, երբեք պիտի չծարաւնայ: Բայց հիմա ըսի ձեզի, տեսա՞ք ալ զիս, եւ տակաւին չէ՞ք հաւատար: Ինչ որ Հայրը ինձի տուաւ՝ ինձի պիտի գայ, եւ ես ինձի եկողը պիտի չմերժեմ. որովհետեւ ես երկինքէն իջայ ո՛չ թէ իմ կամքս կատարելու, այլ կամքը անո՛ր, որ զիս դրկեց»:

Կիրակի, Փետրուար 7, 2010

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ

ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ

Գլուխ 7:37-52

Տօնին վերջին եւ հանդիսաւոր օրը, Յիսուս ոտքի կանգնած բարձրաձայն կ'ըսէր. «Ով որ ծարաւ է, թող ինձի գայ եւ խմէ: Ով որ ինձի կը հաւատայ, ինչպէս Գիրքը կ'ըսէ, “Անոր սիրտէն կենսատու ջուրի գետեր պիտի բղխին”»: Յիսուս ասկա կ'ըսէր Հոգիին համար, որ իրեն հաւատացողները պիտի ընդունէին. իսկ Հոգին տակաւին չէր տրուած, քանի Յիսուս փառաւորուած չէր:

Ժողովուրդէն ոմանք երբ լսեցին այս խօսքերը, ըսին. «Այս է նշմարիտ մարգարէն»: Ուրիշներ կ'ըսէին. «Օձեալն է, Քրիստոսը»: Իսկ ոմանք ալ կ'ըսէին. «Միթէ Գալիլիայէ՞ն պիտի գայ Քրիստոսը: Գիրքը չ'ըսէր թէ Քրիստոս Դաւիթ թագաւորի սերունդէն պիտի ըլլայ եւ Դաւիթի քաղաքին՝ Բեթհեղեմի մէջ պիտի ծնի»: Եւ Յիսուսի պատճառով տարակարծութիւններ յառաջ եկան: Ոմանք ուզեցին ձերբալալել զինք, բայց ոչ ոք համարձակեցաւ:

Երբ տաճարին պահակները վերադարձան, քահանայապետներն ու փարիսեցիները հարցուցին անոնց. «Ինչո՞ւ զինք հոս չբերիք»: Պահակները պատասխանեցին. «Այս մարդուն պէս խօսող երբեք չենք տեսած»: Փարիսեցիները ըսին. «Ի՞նչ, դո՞ւք ալ խաբուեցաք: Իշխանաւորներէն կամ փարիսեցիներէն ոեւէ մէկը հաւատա՞ց անոր: Մեր օրէնքները չգիտցող տգէտ ամբոխը միայն հաւատաց: Անոնք արդէն իսկ նզովուած են»:

Նիկողեմոս, փարիսեցիներէն մէկը, որ նախապէս գիշերով եկած էր Յիսուսի մօտ, ըսաւ անոնց. «Արդեօք մեր օրէնքները մարդս կը դատե՞ն նախ քան զինք լսելը եւ գիտնալը թէ ինչ ըրած է»: Անոնք պատասխանեցին Նիկողեմոսի. «Միթէ դո՞ւն ալ Գալիլիայէն ես. քննէ Գիրքերը եւ պիտի տեսնես թէ Գալիլայէն մարգարէ չ'ելլեր»:

Կիրակի, Փետրուար 14, 2010 – ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ

ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

Գլուխ 6:1-21

(Յապաւումներով)

»Ձգոյշ, Աստուծոյ հանդէպ ձեր պարտաւորութիւնները մարդոց ներկայութեան մի կատարէք ցոյցի համար, որովհետեւ այդ պարագային վարձատրութիւն պիտի չստանաք ձեր երկնաւոր Հօրմէն:

»Երբ ողորմութիւն կ'ուզես տալ՝ փող ու թմբուկով մի ընել, մարդոց ուշադրութիւնը գրաւելու համար: Ընդհակառակը, դուն երբ ողորմութիւն պիտի տաս, ձախ ձեռքը թող չգիտնայ թէ ինչ կ'ընէ աչ ձեռքը:

»Նմանապէս, երբ կ'աղօթես, մտիր սենեակդ, գոցէ դուռը եւ աղօթէ քու երկնաւոր Հօրդ, որ անտեսանելի է. եւ Հայրդ որ կը տեսնէ կատարածդ, քեզի պիտի հատուցանէ յայտնապէս:

»Երբ ծով կը պահէք, տրտումներես մի ըլլաք կեղծաւորներուն նման, որոնք իրենց երեսը կը կախեն, որպէսզի մարդոց ցոյց տան թէ ծով կը պահեն: Ընդհակառակը, երբ ծով կը պահես, օժէ գլուխդ եւ լուս երեսդ, որպէսզի մարդիկ չգիտնան թէ ծով կը պահես. եւ Աստուած որ անտեսանելի է, բայց կը տեսնէ կատարածդ, քեզ պիտի վարձատրէ յայտնապէս:

»Ձեր հարստութիւնը մի դիզէք երկրի վրայ: Այլ ձեր հարստութիւնը երկինքի մէջ դիզեցէք: Որովհետեւ ձեր հարստութիւնը ուր որ է, հոն կ'ըլլայ ձեր սիրտը«:

Փետրուար 21, 2010 – Արտաքսական Կիրակի

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

Գլուխ 5:17-48

»Մի կարծէք թէ եկայ Մովսէսի Օրէնքը կամ մարգարէներու ուսուցումները ջնջելու. չեկայ ջնջելու, այլ ամբողջացնելու:

»Լսեր էք որ անցեալին ըսուած է. 'Մի սպաններ, որովհետեւ ան որ կ'ըսպաննէ, պիտի դատապարտուի': Իսկ ես կ'ըսեմ ձեզի. Ով որ առանց պատճառի իր եղբօր դէմ բարկանայ, պիտի դատապարտուի:

»Լսեր էք որ ըսուած է. 'Մի շնար': Իսկ ես կ'ըսեմ ձեզի, թէ ով որ ցանկութեամբ նայի ոեւէ կնոջ՝ արդէն իսկ իր սրտին մէջ շնութիւն ըրած կ'ըլլայ անոր հետ:

»Ըսուած է նաեւ. 'Ով որ իր կինը կ'արձակէ, անոր արձակման թուղթ թող տայ': Իսկ ես կ'ըսեմ ձեզի. Ան որ առանց պոռնկութեան պատճառի իր կինը կ'արձակէ, ինք պատճառ կը դառնայ անոր շնութիւն ընելուն:

»Լսեր էք նաեւ որ անցեալին ըսուած է. 'Երդմնագանց մի ըլլար. այլ կատարէ ինչ որ երդուած է Աստուծոյ': Իսկ ես կ'ըսեմ ձեզի. բնաւ երդում մի ընէք: Անկէ աւելին չարէն կու գայ:

»Լսեր էք որ ըսուած է. 'Աչքի դէմ աչք պիտի հատուցանես եւ ակոյի դէմ ակոյ': Իսկ ես կ'ըսեմ ձեզի. Մի հակառակիր քեզի չարիք ընողին:

»Լսեր էք արդարեւ որ ըսուած է. 'Սիրէ ընկերդ եւ ատէ թշնամիդ': Իսկ ես կ'ըսեմ ձեզի. Սիրեցէք ձեր թշնամիները, օրհնեցէք ձեր անիծողները, բարիք ըրէք ձեզ ատողներուն եւ աղօթեցէք անոնց համար, որոնք ձեզ կը չարչարեն ու կը հալածեն: Արդ, դուք կատարեալ եղէք, ինչպէս որ ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է«:

Փետրուար 28, 2010 – Անառակ Որդւոյ Կիրակի

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ

(Գլուխ 15:11-32)

Մարդ մը երկու գաւակ ունէր: Կրտսերը հօրը ըսաւ. “Հա՛յր, քու ստացուածքդ ինծի ինկող բաժինը հիմա տուր ինծի”: Եւ հայրը իր գաւակներուն միջեւ բաժնեց իր ունեցածը: Քանի մը օր ետք կրտսեր գաւակը առաւ իր ամբողջ հարստութիւնը եւ հեռու երկիր մը գնաց: Հոն անառակ կեանք մը ապրելով մսխեց հարստութիւնը եւ սպառեց իր ամբողջ ունեցածը:

»Պատահեցաւ որ այդ երկիրին մէջ մեծ սով մը տիրեց, երբ արդէն քաղաքացիներէն մէկուն քով ծառայ եղաւ, եւ անիկա իր ագարակը դրկեց զինք՝ խոզեր արածելու համար: Նոյնիսկ պատրաստ էր խոզերուն կերած եղջիւրներով իր փորը լեցնելու, սակայն ոչ ոք կու տար իրեն: Երբ անդրադարձաւ իր վիճակին, ինքնիրեն ըսաւ. “Հօրս տան մէջ քանի գործաւորներ կան, որոնք իրենց պէտք եղած կերակուրէն աւելին ունին, մինչ ես հոս անօթութենէ կը մեռնիմ: Ելլեմ երթամ հօրս քով եւ ըսեմ իրեն.– Հա՛յր, մեղանչեցի Աստուծոյ եւ քեզի դէմ. այլեւս արժանի չեմ քու որդիդ կոչուելու. զիս նկատէ քու գործաւորներդ մէկը”: Ապա ելաւ եւ հօրը քով գնաց: Տակաւին տունէն բաւական հեռու էր, երբ հայրը տեսաւ զինք ու գթաց. վագելով դիմաւորեց զայն, վզին փաթթուեցաւ եւ համբուրեց: Որդին հօրը ըսաւ. “Հա՛յր, մեղանչեցի Աստուծոյ եւ քեզի դէմ. այլեւս արժանի չեմ քու որդիդ կոչուելու”: Հայրը իր ծառաներուն հրամայեց. “Անմիջապէս բերէ՛ք լաւագոյն պատմունքանը եւ հագցուցէ՛ք իրեն. մատանի անցուցէ՛ք իր մատին եւ կօշիկ տուէ՛ք իրեն: Բերէ՛ք պատրաստ հորթը, մորթեցէ՛ք, ուտենք եւ ուրախանանք: Որովհետեւ իմ այս գաւակս մեռած էր՝ ողջեցաւ, կորսուած էր՝ գտնուեցաւ”: Եւ սկսան խրախանալի:«

Մարտ 7, 2010 – Տնտեսի Կիրակի

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ**

Գլուխ 16:1-31

Իր աշակերտներուն Յիսուս այս առակը պատմեց.–

»Մեծահարուստ մարդ մը կար, որ իր ստացուածքներուն վերակացու տնտես մը ունէր: Երբ տնտեսին մասին մարդիկ ամբաստանութիւն ըրին, ըսելով թէ իր տիրոջ հարստութիւնը կը վատնէ, մեծահարուստը կանչեց զինք եւ ըսաւ. “Ի՞նչ են քու մասիդ այս ըսուածները: Քեզի յանձնած բոլոր ստացուածքներուս հաշիւը տուր: Այլեւս տնտեսս չես կրնար ըլլալ”: Տնտեսը ինքնիրեն խորհեցաւ. “Ի՞նչ կրնամ ընել. ահա տէրս զիս տնտեսութեան պաշտօնէն կը զրկէ: Բանուորութիւն չեմ կրնար ընել, մուրալու կ’ամչնամ: Սակայն գիտեմ թէ ի՛նչ պէտք է ընեմ, որ երբ տէրս տնտեսութեան պաշտօնէն հեռացնէ, մարդիկ զիս ընդունին իրենց տուններէն ներս”: Ապա մէկ առ մէկ կանչեց իր տիրոջ պարտականները եւ առաջինին հարցուց. “Ո՞րքան պարտք ունիս տիրոջս”: Ան պատասխանեց. “Երկու հարիւր թիթեղ ձէթ”: Տնտեսը ըսաւ. “Ահաւասիկ պարտամուրհակդ. նստէ՛ եւ անմիջապէս գրէ՛ հարիւր”: Յետոյ հարցուց միւսին. “Դո՞ւն որքան պարտք ունիս”: Ան պատասխանեց. “Չորս հարիւր յիսուն պարկ ցորեն”: Տնտեսը ըսաւ. “Ահաւասիկ պարտամուրհակդ. նստէ՛ եւ գրէ՛ երեք հարիւր յիսուն”: Տէրը ասիկա լսելով գովեց անիրաւ տնտեսը իր հնարամտութեան համար: Որովհետեւ այս աշխարհի մարդիկը իրենց գործերը վարելու մէջ աւելի նարպիկ են քան լոյսի որդիները: Եւ ես կ’ըսեմ ձեզի.– Աշխարհիկ հարստութիւնը գործածէ՛ք այնպէս՝ որ Աստուծոյ բարեկամութիւնը շահիք, որպէսզի երբ այս աշխարհէն ելլէք, ձեզ յաւիտենական յարկերու մէջ ընդունին:«

Մարտ 14, 2010 – Դատաւորի Կիրակի

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ**

Գլուխ 17:20-18:14

Յիսուս առակ մը խօսեցաւ իր աշակերտներուն, ցոյց տալու համար թէ պէտք է միշտ աղօթել՝ առանց վհատելու: Եւ ըսաւ. »Քաղաքի մը մէջ դատաւոր մը կար, որ ո՛չ Աստուծմէ կը վախնար եւ ոչ ալ մարդոցմէ կ'ամչնար: Նոյն քաղաքին մէջ այրի կին մըն ալ կար, որ իրեն կը դիմէր եւ կը խնդրէր. «Իրաւունքս պաշտպանէ հակառակորդներէս»: Դատաւորը երկար ժամանակ մերժեց դատը տեսնել, սակայն ի վերջոյ ըսաւ ինքնիրեն, «Թէեւ Աստուծմէ չեմ վախնար եւ մարդոցմէ չեմ ամչնար, բայց քանի այս այրին նեղութիւն կու տայ ինծի, իր դատը տեսնեմ, որպէսզի մինչեւ վերջ քովս գալով զիս չանհանգստացնէ»»: Ապա Տէրը շարունակեց. »Լսեցէք թէ ի՛նչ կ'ըսէ անիրաւ դատաւորը: Իսկ Աստուած որքա՞ն պիտի համբարէ իր ընտրեալներուն կրած անիրաւութեան, պիտի չպաշտպանէ՞ զանոնք, որոնք գիշեր ու ցերեկ իրեն կը դիմեն: Այո՛, կ'ըսեմ ձեզի որ անոնց իրաւունքը անմիջապէս պիտի պաշտպանէ: Բայց մարդու Որդին երբ գայ, արդեօք հաւատք պիտի գտնէ՞ երկրի վրայ»:

Մարտ 21, 2009 – Գալստեան Կիրակի

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ**

Գլուխ 22:34-23:39

Ապա Յիսուս ժողովուրդին եւ իր աշակերտներուն ըսաւ.

»Մովսէսի աթոռը նստան օրէնքի ուսուցիչներն ու փարիսեցիները: Իրենց ըսածներուն հնազանդեցէք եւ կատարեցէք զանոնք, սակայն մի՛ ընէք ինչ որ օրէնք կ'ընեն. որովհետեւ անոնք կը սորվեցնեն, բայց չեն կատարեր: Անոնք ծանր եւ դժուարակիր բեռներ կը դնեն մարդոց ուսերուն, մինչ իրենք նոյն բեռները կրելու նուազագոյն ճիւղն իսկ չեն ըներ: Ինչ որ կ'ընեն՝ մարդոց երեսելու համար կ'ընեն: Իրենց դրապանակները կը լայնցնեն եւ իրենց հագուստներուն ծոպերը կ'երկնցնեն: Ընթրիքներու ընթացքին պատուոյ տեղերը գրաւել կը սիրեն եւ ժողովարաններու մէջ՝ առաջին աթոռները: Կը սիրեն հրապարակներու վրայ մարդոցմէ բարեւներ ընդունիլ եւ «Վարդապետ», այսինքն, «Ուսուցիչ» կոչուիլ: Բայց դուք ոեւէ մէկը «վարդապետ» մի կոչէք, որովհետեւ դուք բոլորդ եղբայրներ էք եւ մէկ ուսուցիչ ունիք: Երկրի վրայ ոեւէ մէկը «հայր» մի կոչէք, որովհետեւ դուք մէկ Հայր ունիք, որ երկինքի մէջ է: «Առաջնորդ» մի՛ կոչուիք, որովհետեւ ձեր միակ առաջնորդը Քրիստոս է: Ձեր մէջէն մեծը թող ձեր սպասաւորը ըլլայ: Ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, եւ ով որ իր անձը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ:«

Մարտ 28, 2010 – Ծաղկագարդ

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ**

Գլուխ 21:1-17

Երբ Երուսաղէմի մօտեցան եւ հասան Բեթփազէ, Ջիթենեաց լերան կողին, Յիսուս իր աշակերտներէն երկուքը դրկեց՝ անոնց պատուիրելով. »Գացէք սա դիմացի գիւղը եւ անմիջապէս հոն կապուած էջ մը պիտի գտնէք իր աւանակին հետ. քակեցէք եւ ինծի բերէք: Եթէ մէկը առարկէ, ըսէք, »Տէրը անոնց պէտք ունի«, եւ անմիջապէս թոյլ պիտի տայ ձեզի:«

Ասիկա պատահեցաւ, որպէսզի իրականանայ մարգարէին խօսքը:

»Երուսաղեմի ըստք. ահա քու Թագաւորդ քեզի կու գայ. Անիկա հեզ է, նստած իշու մը աւանակին վրայ«:

Աշակերտները գացին եւ կատարեցին ինչ որ Յիսուս պատուիրեց իրենց:

Իերին էշն ու աւանակը եւ իրենց հագուստները անոնց վրայ դրին: Ապա Յիսուս նստաւ աւանակին վրայ: Ժողովուրդէն շատեր իրենց հագուստները կը փռէին նամբուն վրայ, ուրիշներ ծառերէն ոստեր կը կտրէին եւ կը տարածէին նամբուն վրայ: Եւ ամբողջ բազմութիւնը, որ թափօրին մէջ Յիսուսի առջեւէն կ'երթար կամ կը հետեւէր իրեն, կ'աղաղակէր:

»Օրհնութիւն Դաւիթի որդիին, Օրհնեալ է ան որ կուգայ Տիրոջ անունով, Օրհնութիւն բարձրեալին«:

Երբ Յիսուս Երուսաղեմ մտաւ, ամբողջ քաղաքը դողդեցաւ: »Ո՞վ է անիկա«, կը հարցնէին քաղաքի բնակիչները. եւ ամբոխը կը պատասխանէր.. »Անիկա Յիսուս մարգարէն է, Գալիլիայի Նազարէթ քաղաքէն«:

Ապա Յիսուս տանար մտաւ եւ դուրս վոնտեց բոլոր անոնք որոնք տանարին մէջ առուծախ կ'ընէին. լումայափոխներուն սեղանները եւ աղանավաճառներուն աթոռները շրջեց եւ ըսաւ անոնց. »Սուրբ Գիրքերուն մէջ գրուած է. “Իմ տունս աղօթքի տուն պիտի կոչուի”, մինչ դուք գայն աւագակներու որջի վերածած էք«:

Տանարին մէջ Յիսուսի մօտեցան կոյրեր եւ կաղեր եւ ան բժշկեց զանոնք: Երբ քահանայապետներն ու դպիրները տեսան Յիսուսի կատարած հրաշքները եւ լսեցին աղաղակը մանուկներուն, որոնք տանարին մէջ կը գոչէին. »Օրհնութի՛ւն Դաւիթի որդիին«, բարկացան եւ Յիսուսի ըսին. »Կը լսե՞ս ինչ կ'ըսեն ատոնք«: Յիսուս պատասխանեց. »Այո՛, չէ՞ք կարդացած Սուրբ Գիրքին սա խօսքը, թէ »Մանուկներու եւ կաթնկեր երեխաներու բերնով գովեստ հիւսեցիր«:

Ապա Յիսուս ձգեց զանոնք եւ քաղաքէն դուրս ելաւ՝ դէպի Բեթանիա, եւ հոն գիշերեց:

Ապրիլ 4, 2010 – Տօն Ս. Յարութեան Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

(Գլուխ 16:1-8)

Վասն Յարութեան Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Շաբաթ օրը երբ անցաւ, Մարիամ Մագդաղենացին, Մարիամ՝ Յակոբի մայրը եւ Սողոմէն գացին խունկեր գնեցին եւ պատրաստեցին, որպէսզի երթան եւ օծեն Յիսուսի մարմինը: Կիրակի առաւօտ կանուխ, արեւածագին, գերեզման եկան: »Ո՞վ պիտի գորէ գերեզմանի մուտքի դրուած քարը«, կը հարցնէին իրարու, որովհետեւ քարը շատ մեծ էր: Սակայն երբ նայեցան, տեսան որ քարը արդէն իսկ գորուած էր: Գերեզմանէն ներս մտան եւ ներմակ զգեստ հագած երիտասարդ մը տեսան, որ աջ կողմը նստած էր: Սարսափեցան: Երիտասարդը ըսաւ անոնց. »Մի՛ վախնաք, գիտեմ որ խաչուած Նագովրեցի Յիսուսը կը փնտռէք. բայց հոս չէ, յարութիւն առաւ: Տեսէ՛ք, զինք հոս դրած էին: Այժմ գացէ՛ք, ըսէ՛ք իր աշակերտներուն եւ Պետրոսի, որ ահա Յիսուս ձեզմէ առաջ կ'երթայ Գալիլիա. հոն պիտի տեսնէք զինք, ինչպէս որ ըսած էր ձեզի«: Երբ ասիկա լսեցին, դուրս փախան գերեզմանէն, զարհուրած եւ ապշահար, ու ոչ մէկուն բան մը ըսին, որովհետեւ կը վախնային:

Ապրիլ 11, 2010 – Նոր Կիրակի

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

Գլուխ 1:1-17

Աշխարհի ստեղծագործութենէն առաջ գոյութիւն ունէր Բանը, այսինքն Որդին: Բանը Աստուծոյ հետ էր եւ Բանը Աստուած էր: Անիկա սկիզբէն Աստուծոյ հետ էր: Անով էր որ Աստուած ամէն ինչ ստեղծեց. առանց անոր ոչ մէկ բան ստեղծեց: Կեանքը Անով սկիզբ առաւ. եւ կեանքը մարդոց համար լոյսն է՝ որ խաւարին մէջ կը փայլի. եւ խաւարը չկրցաւ Անոր յաղթել:

Յովհաննէս, որ Աստուծոյ կողմէ դրկուած մարդ մըն էր, եկաւ Լոյսին համար վկայութիւն տալու, որպէսզի ամէն մարդ Անոր անունին հաւատայ: Ինք Լոյսը չէր, այլ՝ Լոյսին համար վկայ մը: Բանն էր նշմարիտ Լոյսը, որ աշխարհ գալով կը լուսաւորէ ամբողջ մարդկութիւնը: Աշխարհի մէջ էր Անիկա, աշխարհը Իրմով ստեղծուեցաւ, սակայն աշխարհը զԱյն չհանչեցաւ: Իր իսկ ստեղծած աշխարհը եկաւ, բայց մարդիկ զինք չընդունեցին: Իսկ զինք ընդունողներուն եւ Իրեն հաւատացողներուն՝ իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու. ո՛չ արեան քամով եւ ո՛չ մարմնի կամ մարդկային կամքով, այլ Աստուծմէ ծնելով:

Եւ Բանը մարմին եղաւ եւ մեր միջեւ բնակեցաւ՝ շնորհիւով եւ նշմարտութեամբ լեցուն: Մենք տեսանք Անոր փառքը, փառքը Աստուծոյ միածին Որդիին:

Յովհաննէս Անոր մասին վկայեց, յայտարարելով. »Ասիկա է Ան, որուն մասին կ'ըսէի. "Ան որ ինձմէ ետք պիտի գայ՝ ինձմէ մեծ է, որովհետեւ ինձմէ առաջ գոյութիւն ունէր"«: Իր լիազատ շնորհիւն մենք շարունակ շնորհիւ ստացանք, որովհետեւ Օրէնքը Մովսէսի միջոցաւ տրուեցաւ, մինչ շնորհիւն ու նշմարտութիւնը՝ Յիսուս Քրիստոսի միջոցաւ:

Ապրիլ 18, 2010 – Կանաչ Կիրակի

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԵՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ

Գլուխ 2:23-3:12

Զատիկի տօնին, մինչ Յիսուս Երուսաղէմ կը գտնուէր, շատեր հաւատացին իրեն, երբ տեսան անոր գործած հրաշքները: Սակայն Յիսուս ինքզինք չէր վստահեր անոնց, որովհետեւ բոլորն ալ կը քանչնար եւ պէտք չունէր ոեւէ մէկուն մասին ուրիշին վկայութեան, քանի ինք գիտէր թէ ի՛նչ կայ այդ մարդուն սիրտին մէջ:

Նիկողոսեմոս անունով փարիսեցի մարդ մը կար, հրեայ իշխան մը, որ գիշերով Յիսուսի մօտ եկաւ եւ ըսաւ անոր. »Վարդապետ, գիտեմք որ դուն Աստուծոյ կողմէ դրկուած ուսուցիչ մըն ես, որովհետեւ ո՛չ ոք կրնայ գործել քո կատարած հրաշքներդ, եթէ Աստուած անոր հետ չըլլայ«: Յիսուս պատասխանեց անոր. »Հաստատ գիտցիր, որ եթէ մէկը վերստին չծնի՝ չի կրնար տեսնել Աստուծոյ արքայութիւնը«: Նիկողոսեմոս հարցուց անոր. »Մեր մարդ մը ինչպէ՞ս կրնայ նորէն ծնիլ: Կարելի՞ քան է որ ան կրկին մտնէ իր մօր որովայնը եւ ծնի«: Յիսուս պատասխանեց. »Վստահ եղիր, որ եթէ մէկը ջուրէն եւ Հոգիէն չծնի՝ չի կրնար երկինքի արքայութիւնը մտնել, որովհետեւ մարմինէն ծնածը մարմին է, իսկ Հոգիէն ծնածը՝ հոգի: Դուն մի՛ գարմանար, որ քեզի ըսի՝ թէ պէտք է կրկին ծնիք: Հովը ուր որ ուզէ կը փչէ. դուն անոր ձայնը կը լսես, բայց չես գիտեր թէ ուրկէ կուգայ եւ ուր կ'երթայ: Նոյնպէս են բոլոր անոնք, որոնք Հոգիէն կը ծնին«:

Նիկողոսեմոս հարցուց. »Ինչպէ՞ս կը պատահի ատիկա«: Յիսուս պատասխանեց. »Դուն որ Իսրայէլի ժողովուրդին վրայ ուսուցիչ կարգուած ես, ատիկա չե՞ս գիտեր: Վստահ եղիր, թէ ինչ որ գիտեմք՝ կը խօսինք եւ ինչ որ տեսանք՝ անոր մասին կը վկայենք, բայց մեր վկայութիւնը չէք ընդունիր: Եթէ երկրաւոր բաներու մասին խօսեցայ ձեզի եւ չհաւատացիք, ինչպէ՞ս պիտի հաւատաք ինձի եթէ երկնաւոր բաներու մասին խօսիմ«:

Ապրիլ 25, 2010 – Կարմիր Կիրակի

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԵՆ

ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ

Գլուխ 5:19-30

Յիսուս անոնց ըսաւ. »Հաստատ գիտցե՛ք, թէ մարդու Որդին ինձ իրմէ ոչինչ կը կատարէ, այլ կը կատարէ միայն այն՝ ինչ որ կը տեսնէ թէ Հայրը կը կատարէ: Որովհետեւ ինչ որ Հայրը կը գործէ, Որդին ալ նոյնը կը գործէ: Հայրը կը սիրէ Որդին եւ անոր ցոյց կու տայ ինչ որ ինձ կը կատարէ: Տակաւին ձեր տեսածներէն աւելի սքանչելի գործեր ալ ցոյց պիտի տայ Որդիին, այնպէս որ դուք պիտի զարմանաք: Ինչպէս որ Հայրը մեռելները կը յարուցանէ եւ կեանք կու տայ անոնց, նոյնպէս ալ Որդին կեանք կու տայ անոնց՝ որոնց ինձ կ'ուզէ: Եւ Հայրը ոեւէ մէկը չի դատեր, այլ դատելու իշխանութիւնը ամբողջութեամբ յանձնած է իր Որդիին, որպէսզի բոլորն ալ պատուեն Որդին, ինչպէս որ Հայրը կը պատուեն: Ան որ չի պատուեր Որդին, չի պատուեր Հայրը որ զայն դրկած է:

»Հաստատ գիտցե՛ք, ան որ իմ խօսքերս կը լսէ եւ կը հաւատայ անոր որ զիս դրկեց, յաւիտեանկան կեանք ունի եւ պիտի չդատապարտուի, որովհետեւ արդէն իսկ մահէն կեանքի անցած է: Վստահ եղե՛ք, ժամանակ կու գայ – եւ արդէն իսկ եկած է – երբ մեռելները Աստուծոյ Որդիին ձայնը պիտի լսեն եւ լսողները պիտի ապրին: Որովհետեւ, ինչպէս որ Հայրը կեանք պարգեւելու գորութիւնը ունի իր մէջ, այդ գորութիւնը տուած է նաեւ Որդիին: Նոյնպէս ալ դատելու իշխանութիւնը տուաւ Որդիին, որովհետեւ անիկա մարդու Որդին է: Ուրեմն մի՛ զարմանաք որ ըսի, թէ ահա կու գայ ժամանակը, երբ բոլոր անոնք որոնք գերեզմաններու մէջ են՝ պիտի լսեն անոր ձայնը եւ դուրս գան. անոնք որ բարիք գործած են՝ յարութիւն պիտի առնեն եւ ապրին, իսկ անոնք որ չարիք գործած են՝ յարութիւն պիտի առնեն եւ դատապարտուին: Ես ինձմէ չէ որ կը դատեմ, այլ կը դատեմ այնպէս ինչպէս Հօրմէս կը լսեմ. եւ ուրեմն իմ դատաստանս արդար է, որովհետեւ կը գործադրեմ ո՛չ թէ իմ կամքս, այլ կամքը անոր՝ որ զիս դրկեց«:

Կիրակի, Մայիս 2, 2010 – Տօն Երեւման Սուրբ Խաչի

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԵՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ

Գլուխ 7:14-24

Տաղաւարահաց տօնակատարութեան մօտաւորապէս կէսին, Յիսուս տանար ելաւ եւ սկսաւ ուսուցանել: Հրեաները կը զարմանային եւ կ'ըսէին. »Ինչպէ՞ս այս մարդը Սուրբ Գիրքերը գիտէ, երբ բնաւ չէ ուսած գտնուիք«: Յիսուս պատասխանեց անոնց. »Ինչ որ ձեզի կ'ուսուցանեմ՝ իմ վարդապետութիւնս չէ, այլ անորը՝ որ զիս դրկեց: Ով որ կ'ուզէ Աստուծոյ կամքը կատարել, պիտի հասկնայ թէ Աստուծմէ՞ է այս վարդապետութիւնը, թէ ես ի՛մ հեղինակութեամբս կը խօսիմ: Ան որ իր հեղինակութեամբ կը խօսի՝ իր անձին համար փառք կը փնտռէ, իսկ ան որ զինք դրկողին փառքը կը փնտռէ, նշմարիտ է եւ խաբէութիւն չկայ անոր մէջ: Մովսէս ձեզի Օրէնքը չտուա՞ւ. սակայն ձեզմէ ոչ ոք կը հնազանդի Օրէնքին: Ինչո՞ւ կ'ուզե՛ք զիս սպաննել«: Ժողովուրդը պատասխանեց. »Դիւահա՞ր ես, ի՞նչ ես. ո՞վ կ'ուզէ քեզ սպաննել«: Յիսուս պատասխանեց. »Հրաշք մը գործեցի եւ բոլորդ վրդովեք էք: Մովսէս հրահանգեց թլփատել ձեր գաւակները – թէեւ Մովսէս չէր սկսողը, այլ ձեր նախահայրերը – եւ դուք ձեր գաւակները կը թլփատէք Շաբաթ օրով: Եթէ մէկը կը թլփատէք Շաբաթ օրով, որպէսզի չբեկանուի Մովսէսի Օրէնքը, ինչո՞ւ զայրացած էք ինձի դէմ, որովհետեւ մէկը ամբողջութեամբ բժշկեցի Շաբաթ օրով: Երեւոյթներէն մի՛ դատե՛ք, այլ արդար դատաստան կատարեցէ՛ք«:

Կիրակի Մայիս 9, 2010

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ

Գլուխ 9:39-10:10

Յիսուս ըսաւ. »Աշխարհ եկայ յայտնելու թէ որո՞նք են կոյրերը եւ որոնք՝ տեսնողները. որպէսզի կոյրերը տեսնեն եւ անոնք որ տեսնեն՝ կուրնան«: Փարիսեցիներէն ոմանք որոնք իր շուրջն էին, լսեցին ասիկա եւ հարցուցին. »Արդեօք մե՞նք ալ կոյր ենք«: Յիսուս անոնց պատասխանեց. »Եթէ կոյր ըլլայիք, մեղք պիտի չունենայիք. բայց քանի կ'ըսէք թէ կը տեսնէք, կը նշանակէ թէ ձեր մեղաւոր ըլլալը կը հաստատէք:

»Հաստատ գիտցէք, ան որ ոչխարներուն փարախը դնեն չի մտներ, այլ ուրիշ տեղէ կը մագցի, անիկա գող է եւ աւագակ. իսկ ան որ դնեն կը մտնէ, անիկա ոչխարներուն հովիւն է: Դո՞նապանը դուռը կը բանայ անոր եւ ոչխարները իր ձայնին կը հետեւին: Իրենց անուններով կը կանչէ իր ոչխարները եւ դուրս կը հանէ, ի՞նք կ'առաջնորդէ, եւ ոչխարները կը հետեւին իրեն, որովհետեւ իր ձայնը կը ճանչնան: Օտարին չեն հետեւիր. ընդհակառակը, կը փախչին անկէ, որովհետեւ օտարներուն ձայնը չեն ճանչնար«:

Յիսուս այս առակը խօսեցաւ անոնց, սակայն անոնք չհասկցան թէ ի՞նչ ըսել կ'ուզէր իրենց: Ուստի Յիսուս կրկին ըսաւ անոնց. »Հաստատ գիտցէք, թէ ե՛ս եմ ոչխարներուն դուռը: Բոլոր անոնք որոնք ինձմէ առաջ եկան, գող էին եւ աւագակ. բայց ոչխարները անոնց չհետեւացան: Ես եմ դուռը. ով որ ինձմէ անցնելով ներս մտնէ՝ պիտի փրկուի. պիտի մտնէ եւ ելլէ եւ ճարակ գտնէ: Գողը կու գայ միայն գողնալու, սպաննելու եւ փնացնելու համար: Ես եկայ որպէսզի կեանք ունենան, եւ լեցուն կեանք ունենան«:

Կիրակի, Մայիս 16, 2010

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ

Գլուխ 12:12-23

Յաջորդ օր ժողովուրդի մեծ բազմութիւնը մը, որ գատկի տօնին առիթով Երուսաղէմ եկած էր, երբ լսեց թէ Յիսուս Երուսաղէմ կու գայ, արմաւենիի ճիւղեր առաւ եւ Յիսուսը դիմաւորելու ելաւ, բարձրաձայն աղաղակելով.

»Ովսաննա,

օրհնեա՛լ ըլլայ ան որ կու գայ Տիրոջ անունով,

Իսրայէլի թագաւորը«:

Յիսուս էլ մը գտնելով նստաւ անոր վրայ, ինչպէս որ Սուրբ Գիրքերուն մէջ գրուած է.

»Մի՛ վախնար, Ով Երուսաղէմ, Միոնի՛ աղջիկ,

որովհետեւ թագաւորդ քեզի կու գայ

իշու մը աւանակին վրայ նստած«:

Յիսուսի աշակերտները այս բոլորը չհասկցան ատենին, բայց Յիսուս փառաւորուեցաւ՝ այն ատեն յիշեցին թէ այս կատարուածները Յիսուսի համար գրուած էին եւ իրենք այդ գրուածն էր որ կատարեցին: Բոլորն ալ կը վկայէին թէ Յիսուս Ղազարոսը կանչեց գերեզմանէն եւ գայն մեռելներէն յարուցանեց: Այս իսկ պատճառով Երուսաղէմ գտնուողները բոլորն ալ զինք դիմաւորուելու ելան, որովհետեւ լսած էին թէ ի՞նչպէս ան յարութեան հրաշքը գործած էր: Իսկ փարիսեցիները իրարու կ'ըսէին. »Կը տեսնե՞ք որ բան մըն ալ չենք կրնար ընել. ահա ամբողջ աշխարհը իրեն կը հետեւի«:

Տօնին առիթով կարգ մը յոյներ ալ եկած էին Երուսաղէմ՝ Աստուծոյ երկրպագելու: Անոնք մօտեցան Փիլիպպոսի, որ Գալիլիայի Բեթսայիդա քաղաքէն էր, եւ աղաչելով ըսին. »Տէր, կ'ուզեմք Յիսուսը

տեսնել«: Փիլիպպոս եկաւ Անդրէասին ըսաւ եւ երկուքը միասին Յիսուսի ներկայացուցին անոնց խնդրանքը: Յիսուս պատասխանեց. »Ահա մարդու Որդիին փառաւորուելու ժամը հասաւ«:

Կիրակի, Մայիս 23, 2010 – ՀՈԳԵԳԱԼՈՒՍ

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ

Գլուխ 14:25-31

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ.–

»Այս բոլորը խօսեցայ ձեզի, քանի տակաւին ձեզի հետ եմ: Բայց Միսիթարիչը՝ Սուրբ Հոգին, որ Հայրը ձեզի պիտի դրկէ իմ անունովս, ան ձեզի ամէն ինչ պիտի սորվեցնէ եւ յիշեցնէ ինչ որ ես ձեզի ըսի: Խաղաղութիւն կը թողում ձեզի. իմ խաղաղութիւնս է որ կու տամ ձեզի, որ այս աշխարհի տուած խաղաղութենէն տարբեր է: Մի՛ խոռովիք եւ մի՛ վախնաք: Լսեցիք ինչ որ ըսի ձեզի, թէ «Ահա կ'երթամ, բայց կրկին պիտի գամ ձեզի»: Եթէ զիս կը սիրէք, ուրախ պիտի ըլլաք որ Հօրս կ'երթամ, որովհետեւ Հայրս ինձմէ մեծ է: Այս բոլորը ձեզի ըսի նախ քան պատահիլը, որպէսզի երբ պատահի՝ այն ատեն հաւատաք: Այլեւս երկար պիտի չխօսիմ ձեզի, որովհետեւ ահա կու գայ այս աշխարհի իշխանը, որ իմ վրաս ոչ մէկ իշխանութիւն ունի: Բայց աշխարհը պէտք է գիտնայ թէ ես Հայրը կը սիրեմ եւ ա՛յդ է պատճառը որ ինձի բոլոր պատուիրածները կը կատարեմ: Ելէ՛ք, երթանք այստեղէն«:

Կիրակի, Մայիս 30, 2010

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ

Գլուխ 4:25-30

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ.–

»Ձեզի օրինակներով խօսիմ: Իսրայէլի մէջ բազմաթիւ այրիներ կային Եղիայի օրերուն, երբ երեւոյնքէն տարի երկինքը չանձրեւեց եւ ամբողջ երկրին մէջ սաստիկ սով տիրեց: Բայց Եղիա անոնցմէ ոեւէ մէկուն չդրկուեցաւ, այլ դրկուեցաւ Սիդոնի մօտիկ Սարեփաթ գիւղը բնակող այրի կնոջ մը: Նոյնպէս, Եղիսէ մարգարէի օրերուն Իսրայէլի մէջ բազմաթիւ բորոտներ կային, բայց անոնցմէ ոչ մէկը բժշկուեցաւ, այլ միայն Նէեման անունով ասորի մը«:

Այս ակնարկութիւնները լսելով՝ ժողովարանին մէջ գտնուողները բարկութեամբ լեցուեցան: Ելան, Յիսուսը քաղաքէն դուրս հանեցին եւ գահավէժ ընելու նպատակով գայն տարին մինչեւ կատարը այն լեռան, որուն վրայ շինուած էր իրենց քաղաքը: Բայց Յիսուս անոնց մէջէն անցաւ գնաց:

Կիրակի, Յունիս 6, 2010

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ

Գլուխ 10:22-30

Ձմեռ էր. Երուսաղեմի մէջ տաճարին Նաւակատիճի տօնակատարութիւնը տեղի կ'ունենար: Յիսուս տաճարին Սողոմոնի սրահին մէջ կ'երթեւեկէր, երբ իր շուրջ հաւաքուեցան հրեաները եւ հարցուցին. »Մինչեւ ե՞րբ մեր հոգին պիտի հանես. եթէ դուն ես Քրիստոսը՝ յստակ ըսէ՛ մեզի«:

Յիսուս պատասխանեց. »Արդէն իսկ ձեզի ըսած եմ, սակայն չէ՛ք հաւատար: Այն գործերը որ Հօրս անունով կը կատարեմ, անոնք իսկ կը վկայեն՝ թէ ո՛վ եմ ես: Բայց դուք չէ՛ք հաւատար, որովհետեւ իմ ոչխարներէս չէ՛ք: Ես ոչխարներս կը ճանչնամ. անոնք ձայնս կը լսեն եւ կը հետեւին ինձի, ու ես անոնց յաւիտեանական կեանք կու տամ, բնաւ պիտի չմեռնին: Ո՛չ ոք պիտի կարենայ զանոնք յափշտակել իմ ձեռքէս: Հայրս այդ ոչխարները ինձի տուաւ, եւ ոչ ոք կրնայ յափշտակել զանոնք իմ Հօրս ձեռքէն, որովհետեւ Հայրս բոլորէն աւելի մեծ է: Ես եւ Հայրս մէկ ենք«:

Կիրակի, Յունիս 13, 2010

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

Գլուխ 12:1-8

Շաբաթ օր մը Յիսուս արտերուն մէջէն կ'անցնէր:

Աշակերտները անօթեցած ըլլալով սկսան հասկ փրցնել եւ ուտել: Երբ փարիսեցիները ասիկա տեսան, ըսին Յիսուսի. »Տե՛ս, աշակերտներդ ի՛նչ կ'ընեն. բան մը՝ որ արգիլուած է Շաբաթ օրով ընել«: Յիսուս պատասխանեց. »Ձե՞ք կարդացած թէ ի՛նչ ըրաւ Դաւիթ, երբ ինք եւ իր հետ եղողները անօթեցան: Աստուծոյ տունը չմտա՞ւ եւ Առաջաւորութեան հացը չկերա՞ւ, որ օրէնքին համաձայն միայն քահանաներուն արտօնուած էր եւ ո՛չ թէ իրեն կամ իր հետ եղողներուն: Կամ չէ՞ք կարդացած Մովսէսի Օրէնքին մէջ, թէ Շաբաթ օրեր քահանաները տաճարին մէջ կը սրբապղծեն Շաբաթը եւ սակայն ասիկա մեղք չի համարուիր իրենց: Ահա կ'ըսեմ ձեզի, որ տաճարէն աւելի մեծ մէկը կայ հոս: Եթէ իրապէս հասկնայիք թէ ի՛նչ կը նշանակէ մարգարէին խօսքը. “Ողորմութիւն կ'ուզեմ եւ ոչ գոհ”, այն ատեն չէիք դատապարտեր անմեղները, որովհետեւ մարդու Որդին Տէրն է Շաբաթին«:

Կիրակի, Յունիս 20, 2010

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

Գլուխ 12:38:45

Այն ատեն օրէնքի ուսուցիչներէն եւ փարիսեցիներէն ոմանք ըսին Յիսուսի. »Վարդապետ, կ'ուզեմք որ հրաշք մը գործես«: Յիսուս անոնց պատասխանեց. »Աստուծոյ անհաւատարիմ չա՛ր սերունդ. նշան մը կ'ուզէք. բայց Յովնան մարգարէին պատահած հրաշքէն զատ ուրիշ նշան պիտի չտեսնէք: Եւ ինչպէս Յովնան երեք օր ցերեկ ու գիշեր կէտ ձուկին փորին մէջ անցուց, նոյնպէս ալ

մարդու Որդին երեք օր ցերեկ ու գիշեր պիտի մնայ երկրի ընդերքին մէջ: Դատաստանի օրը նինուէացիները ձեզի դէմ պիտի ըլլեն եւ դատապարտեն ձեզ, որովհետեւ անոնք Յովնանի քարոզութեամբ զղջացին իրենց մեղքերուն համար: Եւ ահա, Յովնանէն աւելի մեծ մէկը կայ հոս: Դարձեալ, Դատաստանի օրը հարաւի թագուհին պիտի ելլէ եւ դատապարտէ ձեզ, որովհետեւ ան իր հեռաւոր երկրէն եկաւ Սողոմոնի իմաստուն ուսուցումները լսելու համար: Եւ ահա, Սողոմոնէն աւելի մեծ մէկը կայ հոս:

»Երբ չար ոգի մը դուրս կ'ելլէ մարդու մը մէջէն, կ'երթայ եւ անջրդի վայրերը կը շրջի՝ հանգիստ տեղ մը գտնելու համար: Եւ երբ չգտնէ, ինքնիրեն կ'ըսէ. «Ելեմ երթամ իմ տունս, ուրկէ ելայ»: Ուստի կը վերադառնայ իր նախկին տունը եւ գայն կը գտնէ պարապ, մաքուր եւ յարդարուած: Ապա կ'երթայ եւ կը բերէ իրմէ աւելի չար եօթը այլ ոգիներ, որոնց հետ ներս մտնելով՝ կը բնակի հոն, որով այդ մարդուն վերջը իր նախկին վիճակէն շատ աւելի գէշ կ'ըլլայ: Գիտցէ՛ք որ նոյնը պիտի պատահի նաեւ այս չար սերունդին»:

Կիրակի, Յունիս 27, 2010

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

Գլուխ 13:24-30

Յիսուս ուրիշ առակ մըն ալ խօսեցաւ անոնց եւ ըսաւ.

»Մարդ մը լաւ սերմեր ցանեց իր արտին մէջ: Գիշեր մը, երբ ամէն մարդ քնացած էր, անոր թշնամին եկաւ, որով ցանեց ցորենին մէջ եւ գնաց: Երբ սերմերը անեցան եւ սկսան հասկ կազմել, այն ատեն որով մը ալ երեւցաւ: Տանտիրոջ ծառաները եկան եւ ըսին անոր. «Տէ՛ր, դուն միայն լաւ սերմեր չցանեցի՞ր արտիդ մէջ. ուրկէ՞ հապա որովմը»: Ան պատասխանեց. «Ասիկա թշնամիի գործ է»: Ծառաները ըսին. «Կ'ուզե՞ս որ երթանք եւ որովմը քաղենք»: «Ո՛չ, – պատասխանեց տէրը, – որովհետեւ որովմը քաղած ատեն կրնայ ըլլալ որ ցորենն ալ միասին արմատախիլ ընէ: Զգեցէ՛ք որ երկուքն ալ միասին անին մինչեւ հունձի ժամանակ, երբ հնձուորներուն կ'ըսեմ որ նախ որովմը քաղեն, խուրձեր կազմեն այրելու համար, եւ ապա քաղեն ցորենը եւ ամբարեն շտեմարաններուս մէջ»:

»Ահաւասիկ ճիշդ ասոր կը նմանի երկինքի արքայութիւնը»:

Կիրակի, Յունիս 4, 2010 – Բարեկենդան Վարդավառի Պահոց

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

Գլուխ 14:13-21

Երբ Յիսուս Յովհաննէսի գլխատումը լսեց, նաւակով մեկնեցաւ այդտեղէն եւ առանձին գնաց ամայի վայր մը: Շրջանի քաղաքներու բնակիչները լսելով ասիկա, փախելով հետեւեցան իրեն: Երբ Յիսուս նաւակէն դուրս ելաւ, տեսաւ մեծ բազմութիւնը, գթաց անոնց վրայ եւ հիւանդները բժշկեց:

Երեկոյեան, իր աշակերտները իրեն մօտեցան եւ ըսին. «Ամայի տեղ եմք եւ ժամանակն ալ ուշ է. արձա- կէ՛ ժողովուրդը, որպէսզի երթան շրջակայ գիւղերը իրենց համար ուտելիք գնելու»: Յիսուս ըսաւ.

»Ինչո՞ւ իրենք երթան: Դո՛ւք տուէք անոնց ուտելիքը»: Անոնք ըսին Յիսուսի. »Հոս գրեթէ ոչինչ ունինք, բացի հինգ հացէ եւ երկու ձուկէ»: Յիսուս ըսաւ. »Հո՛ւ բերէք ատոնք»: Եւ հրամայեց որ ժողովուրդը նստեցնեն խոտին վրայ: Ապա առաւ հինգ հացը եւ երկու ձուկը, փառք տուաւ Աստուծոյ, օրհնեց, կտրեց հացերը եւ տուաւ աշակերտներուն, որոնք բաշխեցին ժողովուրդին: Բոլորն ալ կերան ու կշտացան. եւ աշակերտները աւելցած կտորները հաւաքելով՝ տասներկու սակառ լեցուցին: Իսկ ուտողներուն թիւը շուրջ հինգ հազար էր, կիներն ու մանուկները չհաշուած:

Կիրակի, Յուլիս 11, 2010 – ՎԱՐԴԱՎԱՌ

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

Գլուխ 17:1-13

Վեց օր ետք, Յիսուս իր հետ առաւ Պետրոսը, Յակոբոս եւ Յովհաննէս եղբայրները եւ զանոնք բարձր լեռ մը հանեց, ուր առանձին էին: Հոն այլակերպուեցաւ անոնց դիմաց. իր դէմքը արեւու նման լուսաւոր դարձաւ եւ հագուստները լոյսի նման ցերմակ եղան: Եւ ահա երեսցան Մովսէսն ու Եղիան, որոնք կը խօսէին Յիսուսի հետ: Պետրոս ըսաւ Յիսուսի. »Տէ՛ր, ինչ լաւ է հոս. եթէ կ'ուզես երեք վրաններ շինենք, մէկը քեզի, մէկը Մովսէսի եւ միւսը Եղիայի համար»: Մինչ Պետրոս կը խօսէր, ահա լուսաւոր ամպ մը ծածկեց զիրենք. ամպին մէջէն ձայն մը լսուեցաւ որ կ'ըսէր. »Այս է իմ սիրելի Որդիս որ հաւնեցայ. անոր մտիկ ըրէք»: Երբ աշակերտները լսեցին ասիկա, սարսափահար՝ երեսի վրայ գետին ինկան: Յիսուս մօտենալով՝ դպաւ անոնց եւ ըսաւ. »Ոտքի՛ ելէք, մի՛ վախճա՛ք»: Աշակերտները իրենց աչքերը վեր բարձրացուցին եւ Յիսուսէ գատ մարդ չտեսան:

Եւ մինչ լեռնէն վար կ'իջնէին, Յիսուս պատուիրեց անոնց, ըսելով. »Մինչեւ որ մարդու Որդին մեռելներէն յարութիւն չառնէ, ձեր տեսածը ոեւէ մէկուն մի՛ պատմէք»: Այն ատեն աշակերտները հարցուցին Յիսուսի. »Հապա ինչո՞ւ Օրէնքի ուսուցիչները կ'ըսեն թէ նախ Եղիան պէտք է գայ»: Յիսուս պատասխանեց. »Ճի՛շդ է, Եղիան նախ գալով՝ պիտի պատրաստէ ամէն ինչ. բայց գիտցէ՛ք որ Եղիան արդէն իսկ եկած է, սակայն մարդիկ գայն չհանչցան եւ անոր հետ վարուեցան ինչպէս որ ուզեցին: Նոյնպէս ալ մարդու Որդին պիտի չարչարուի անոնց կողմէ՛ք: Այն ատեն աշակերտները հասկցան թէ Յովհաննէս Մկրտիչի մասին կը խօսէր ան:

Կիրակի, Յուլիս 18, 2010

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

Գլուխ 18:10-14

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ.---

»Զգոյշ, մի՛ արհամարհէ՛ք այս փոփրիկներէն՝ ոեւէ մէկը. գիտցէ՛ք որ անոնց հրեշտակները երկինքի մէջ միշտ կը տեսնեն իմ երկնաւոր Հայրս: Որովհետեւ մարդու Որդին եկաւ կորսուածը փրկելու համար:

»Ի՞նչ կը կարծէ՛ք. եթէ մարդ մը իր հարիւր ոչխաններէն մէկը կորսնցնէ, չի՞ ձգեր իննսունինը ոչխարները լերան վրայ եւ չ'ե՞րթար փնտոելու կորսուած ոչխարը: Այո՛, կ'երթայ: Եւ եթէ պատահի որ գտնէ, վստահ եղէ՛ք որ աւելի կ'ուրախանայ այդ ոչխարին համար, քան թէ իննսունինը ոչխարներուն համար որոնք կորսուած չեն: Նմանապէս ալ Հայրս, որ երկինքի մէջ է, չ'ուզեր որ այս փոփրիկներէն մէկը կորսուի»:

Կիրակի, Յուլիս 25, 2010

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՄԱՏԹԷՆԵՍԻ**

Գլուխ 19:3-12

Փարիսեցիներ Յիսուսը փորձելու մտադրութեամբ մօտեցան անոր եւ հարցուցին. «Իրաւունք ունի՞ր մէկը ոեւէ պատճառով իր կինը արձակելու»: Յիսուս անոնց պատասխանեց. «Զէ՞ք կարդացած Սուրբ Գիրքերուն մէջ, թէ Աստուած սկիզբէն արու եւ էֆ ստեղծեց մարդիկը եւ ըսաւ անոնց. “Այս պատճառով այրը պիտի ձգէ իր հայրն ու մայրը եւ իր կնոջ միանայ, եւ երկուքը մէկ մարմին պիտի ըլլան”: Հետեւաբար այլեւս երկու չեն, այլ մէկ մարմին: Ուրեմն ոեւէ մէկը թող չբաժնէ անոնք որ Աստուած միացուց»:

Փարիսեցիները դարձեալ հարցուցին. «Հապա ինչո՞ւ Մովսէս օրէնք սահմանեց՝ բաժանման թուղթ տալ կնոջ եւ արձակելի զայն»: Յիսուս պատասխանեց. «Մովսէս ձեր իստասարտութեան պատճառով արտօնեց արձակելի ձեր կիները, սակայն ստեղծագործութեան ժամանակ արձակելու իօսօք չկար: Գիտցէ՛ք նաեւ թէ ով որ իր կինը կ'արձակէ առանց պոռնկութեան պատճառի եւ ուրիշ մը կ'առնէ՝ շնութիւն ըրած կ'ըլլայ. եւ ով որ արձակուած կինը կ'առնէ՝ ան ալ շնութիւն ըրած կ'ըլլայ»:

Աշակերտները ըսին Յիսուսի. «Եթէ ամուսնութիւնը այդպէս դատապարտութեան պատճառ կրնայ ըլլալ այր մարդուն եւ կնոջ համար, աւելի լաւ է չամուսնանալ»: Յիսուս ըսաւ. «Բայց ամէն մարդ չի կրնար առանց ամուսնութեան մնալ, այլ միայն անոնք, որոնց Աստուած կարողութիւն տուած է: Որովհետեւ մարդիկ չեն ամուսնանար այն պարագաներուն, երբ ծնունդով ներքինի են, կամ մարդոց կողմէ ներքինի եղած են եւ կամ իրենք զիրենք ներքինի դարձուցած են Աստուծոյ արքայութեան համար: Ով որ կրնայ ընդունիլ իմ հաստատումս, թող կատարէ զայն»:

Կիրակի, Օգոստոս 1, 2010

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ**

Գլուխ 3:13-21

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ.--

»Ոչ ոք երկինք ելաւ բացի մարդու Որդիէն, որ իջաւ երկինքէն, ուր կը գտնուէր: Եւ ինչպէս որ Մովսէս պղնձեայ օձը բարձրացուց անապատին մէջ, նոյնպէս ալ պէտք է մարդու Որդին բարձրանայ, որպէսզի անոր հաւատացողը յաւիտեանական կեանք ունենայ: Որովհետեւ Աստուած ա՛յնքան սիրեց

աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդին տուաւ, որպէսզի անոր հաւատացողը չմեռնի, այլ յաւիտեանական կեանք ունենայ: Որովհետեւ Աստուած իր Որդին աշխարհ դրկեց, ո՛չ թէ որպէսզի Որդին աշխարհը դատապարտէ, այլ որպէսզի աշխարհը փրկէ: Ով որ կը հաւատայ անոր՝ չի դատապարտուիր. իսկ ով որ չի հաւատար անոր, արդէն իսկ դատապարտուած է, Աստուծոյ միածին Որդիին չհաւատալուն համար:

»Եւ դատապարտութիւնը այս է. հակառակ անոր որ լոյսը աշխարհ եկաւ, մարդիկ խաւարը լոյսէն աւելի սիրեցին, որովհետեւ չարութիւն կը գործէին: Ով որ չար գործ կը կատարէ, կ'ատէ լոյսը եւ լոյսին չի գար, որպէսզի իր գործերը չյայտնուին: Սակայն ով որ կը կատարէ ինչ որ ճշմարիտ է, լոյսին կու գայ, որպէսզի յայտնի ըլլայ թէ իր գործերը Աստուծոյ կամֆին համաձայն գործուած են«:

Կիրակի, Օգոստոս 8, 2010
Բարեկենդան Ս. Աստուածածնի Պահոց

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

Գլուխ 2:1-12

Քանի մը օրեր ետք Յիսուս վերադարձաւ Կափառնայում: Անմիջապէս որ լուր տարածուեցաւ թէ տունին մէջ կը գտնուի, շատեր հաւաքուեցան հոն, այնքան որ դրան առջեւ իսկ տեղ չէր մնացեր: Եւ Յիսուս Աստուծոյ խօսքը կը փարօզէր անոնց:

Այդ միջոցին Յիսուսի բերին անդամալոյծ մը, որ չորս հոգիներ շալկած էին: Երբ ամբոխին պատնասով չկրցան գայն Յիսուսի մօտ բերել, ֆակեցին տունին տանիքը եւ առաստաղը բանալով՝ անդամալոյծը մահիճով վար իջեցուցին: Յիսուս անոնց հաւատքը տեսնելով ըսաւ անդամալոյծին. «Որդեակ, մեղքերդ ներուած ըլլան քեզի»:

Օրէնքի ուսուցիչներէն ոմանք որոնք հոն նստած էին, սկսան մտով քննադատել գայն. «Ինչպէ՞ս կը համարակի ասանկ բան ըսել. ըրածը հայհոհութիւն է: Աստուծմէ գատ ո՞վ կրնայ մեղքերը ներել»:

Յիսուս վայրկեանին գիտցաւ անոնց մտածումը եւ ըսաւ. «Ինչո՞ւ այնդպէս կը մտածէք: Ո՞ր մէկը աւելի դիւրին է. անդամալոյծին “մեղքերդ ներուած են քեզի” ըսելը, թէ “ե՛լ մահիճդ ա՛ն եւ տունդ գնա” ըսելը: Բայց որպէսզի գիտնաք թէ մարդու Որդին երկրի վրայ իշխանութիւն ունի մեղքերը ներելու, ահա նաեւ կը բժշկեմ գայն»:

Ու դառնալով անդամալոյծին, ըսաւ. «Քեզի կ'ըսեմ. ե՛լ, ա՛ն մահիճդ եւ տունդ գնա»:

Անդամալոյծը անմիջապէս բոլորին առջեւ ոտքի ելաւ, վերցուց իր մահիճը եւ դուրս ելաւ: Բոլորն ալ զարմացան. կը փառաւորէին զԱստուած եւ կ'ըսէին. «Այսպիսի բան բնաւ տեսած չէինք»:

Վերափոխումն Ս. Աստուածածնի, Կիրակի, Օգոստոս 15, 2010

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ

Գլուխ 2:1-7

Այդ օրերուն Օգոստոս կայսր հրամանագիր հանեց՝ իր կայսրութեան սահմաններուն մէջ գտնուող բոլոր բնակիչներուն մարդահամարը կատարելու: Այս առաջին մարդահամարը տեղի ունեցաւ Սուրիոյ կառավարիչ Կիրենիոսի օրերուն: Ամէն մարդ իր ծննդավայրը կ'երթար իր անունը արձանագրել տա-

լու համար: Յովսէփ Դաւիթի սերունդէն ըլլալուն համար, Գալիլիայի Նազարէթ քաղաքէն ելաւ եւ իր անունը արձանագրել տալու համար գնաց Հրէաստանի Բեթլեհէմ քաղաքը՝ Դաւիթ թագաւորի ծննդավայրը: Իրեն կ'ընկերանար իր նշանածը՝ Մարիամ, որ յղի էր:

Բեթլեհէմի մէջ, Մարիամի ծննդաբերութեան ժամանակը հասաւ եւ ծնաւ իր անդրանիկ գաւակը, որ փաթթեց խանձարուրի մէջ եւ դրաւ մսուրի մը մէջ, որովհետեւ պանդոկին մէջ իրենց համար տեղ չկար:

Կիրակի, Օգոստոս 22, 2010

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԵՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ

Գրուիւ 1:39-56

Նոյն օրերուն Մարիամ նամբայ ելլելով անապարանքով գնաց Յուդայի լեռնային շրջանի քաղաքներէն մէկը: Հոն Զաքարիայի տունը մտնելով Եղիսաբէթի ողջոյն տուաւ: Երբ Եղիսաբէթ Մարիամի ողջոյնը լսեց, իր որովայնին մէջ երեխան շարժեցաւ եւ Եղիսաբէթ Սուրբ Հոգիով ներշնչուած՝ բարձրաձայն ըսաւ. «Կիներուն մէջ օրհնեալ՝ ես դուն եւ օրհնեալ է գաւակը որ կը կրես որովայնիդ մէջ: Ինչ երջանկութիւն, որ Տիրոջ մայրը ինձի կ'այցելէ, որովհետեւ երբ ողջոյնդ լսեցի, երեխաս ուրախութեամբ շարժեցաւ որովայնիս մէջ: Երանի քեզի որ հաւատացիր, որովհետեւ Աստուծոյ կողմէ քեզի ըսուածները պիտի կատարուին:»

Մարիամ ըսաւ.

»Ինչպէս Տէրը գովաբանեմ.

Ահա հոգիս կ'ուրախանայ Աստուծով, իմ փրկիչովըս,

որովհետեւ ան տեսաւ իմ աղախինին հեգութիւնը:

Եւ ասկէ ետք բոլոր ազգերն երանի պիտի տան ինձի,

քանի Հոգին Աստուծո՞ւ ինձի համար

մեծամեծ գործեր կատարեց.

Սուրբ է անունը անոր:

Բոլոր ժամանակներուն մէջ

ողորմութեամբ ան կը նայի

աստուածավախ մարդոց վրայ:

Իր գօրաւոր բազուկով

ոչնչացուց հպարտները՝

իրենց բոլոր խորհուրդներով:

Գահազրկեց հոգրները

եւ բարձրացուց խոնարհները:

Անօթիները բարիքներով լիացուց,

մինչ հարուստները դատարկաձեռն արձակեց:

Պաշտպան եղաւ իր ծառային՝ Իսրայէլի,

որովհետեւ յաւերժական ողորմութիւն

խոստացած էր մեր հայրերուն՝

Աբրահամի եւ անոր գաւակներուն:»

Մարիամ շուրջ երեք ամիս Եղիսաբէթի մօտ մնալէ ետք վերադարձաւ իր տունը:

